ցույց տվեց, բայց հետո դարձավ չար: Մի օր ելավ գնաց զբոսանքի և հասավ մինչև այն լիճը, որ կաթողիկոսը շինել էր: Լիճը և այգին, վայրերի գեղեցկությունը տեսավ, ցանկացավ դրանք: Մարդ ուղարկեց աթոռակալ Մատթեոս վարդապետի մոտ և խնդրեց այդ տեղը: Իսկ աթոռակալն ասաց, թե չեմ կարող տալ, քանզի դրա տերը հայոց երկրում է, գուցե գա, անարգանք ու նախատինք տա այնքան, որ խայտառակ լինենք:

Երբ այս լսեց, խոր խոցվեց, կարծես նետ մտավ նրա սիրտը: Եղավ, որ Հակոբ կաթողիկոսը եկավ իր Աթոռը՝ Սուրբ Էջմիածին: Գնաց խանի մոտ, իր հետ պատշաճավոր աղերսագիր տարավ և խոսեցին օսմանցիների երկրի, պատերազմի և այլ շատ բաների մասին: Եվ երբ խանը դարձյալ եկավ Էջմիածին, գնաց նայելու լճափը, այդ ժամանակ էլ խանը խնդրեց լիճը: Կաթողիկոսն ասաց՝ ինչպե՞ս տամ այն քեզ, քանզի մեր կյանքն ու կենդանությունը այն է, մեր սերմանելու տեղն է և մեր միաբանների հանգստավայրը: Խանն ասաց՝ փոխիր այն այգու հետ կամ վաճառիր: Կաթողիկոսն ասաց՝ մենք այն նվիրաբերել ենք Էջմիածնին, այլևս հնար չկա, որ այն օտարվի նրանից: Այստեղ ևս խոցվեց խանը, որովհետև երկու անգամ արհամարհվեց նրա խոսքը: Հնարներով կամենում էր որոգայթի մեջ գցել Աթոռը:

Օրեր հետո կաթողիկոսը գնաց խանի մոտ և ասաց՝ ես կամենում եմ շահի մոտ գնալ և նրանից իմ մասին հրաման առնեմ: Խանն ասաց՝ դու մի գնա, մենք այստեղից կհոգանք քո բանը: Կաթողիկոսն ասաց՝ մեզ վրա մեծ պարտք կա, գնամ այնտեղից հավաքեմ և պարտքերը հատուցեմ: Խանն ասաց՝ այստեղ վաճառականներից կառնենք և կտանք քո պարտքերը: Կաթողիկոսը ասաց՝ եթե վաճառականներից առնենք, որտեղի՞ց կհատուցենք նրանց: Քանզի մենք նաև արքունիքում գործ ունենք, և դրանց հոգալու համար էլ եմ գնում: Այս ասաց, ելավ գնաց:

Օրեր հետո ելավ գնաց հասավ մինչև Աստապատ: Իսկ խանը իր մտքում խորհեց ու ասաց՝ ես նրան շատ անարգանք տվի, գուցե գնա, շահի մոտ գանգատվի ինձնից այլ գանգատավորների հետ, և փորձանք բերեն իմ գլուխը: Շուտափույթ զինվորներ ուղարկեց և ասաց՝ որտեղ էլ լինի նա, գտեք, բերեք ինձ մոտ:

Զորականները գնացին Աստապատ և բռնի կերպով բերին, հասցրին Երևան և իմացրին խանին: Կանչեց իր մոտ և ասաց՝ Ես քեզ ասացի՝ մի գնա, քանզի այստեղից կհոգանք քո գործերը: Այժմ գնա, նստիր Երևանի անապատում, իսկ ես քո պարտքերը կհատուցեմ: Այսպես նրան նախնական կալանքի ենթարկեց և նրա վրա հսկիչ նշանակեց Աբաս անունով մի մահմեդական և պատվիրեց զգուշությամբ պահպանել, որ չփախչի: Իսկ կաթողիկոսը նրան խիստ պատգամներ ուղարկեց և ասաց. «Ես գնում էի շահի ոտքը, իսկ դու կալանավորեցիր ինձ ինչպես մահապարտի: Արդ, եթե մահվան եմ արժանի, սպանիր ինձ, իսկ եթե ոչ, ինչո՞ւ եմ բանտում գտնվում: Իսկ խանը մարդ ուղարկեց նրա մոտ և ասաց՝ ոչ կսպանեմ քեզ, ոչ էլ կարձակեմ, այլ այդտեղ մնա մինչև մեռնես: Իսկ ինքը հավաքեց բոլոր հարուստ ու մեծատուն մարդկանց, նրանցից առավ հազար երեք հարյուր թուման դրամ՝ պատճառաբանելով, թե Աթոռի պարտքն եմ տալու, իսկ հետո մեզ կհատուցեն Էջմիածնում նստողները: Բոլորին խաբեց և ինքը լափեց և նրան փող չտվեց: Եվ այսպես կաթողիկոսին կալանավոր արեց, իսկ ինքը ապրում էր դատարկ հույսով:

ԳԼՈՒԽ ԽԲ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՓԱԽՈՒՍՏԸ ԵՎ ԽԱՆԻ ԿՈՐՈՒՍՏԸ

Ինչ որ արեց կաթողիկոսի համար, չիմացավ թե իր անձի կորստի համար արեց: Քանզի դրամատերերը, որոնցից խանը առել էր՝ ոմանցից տասը թուման, ոմանցից քսան, ինչպես գրեցինք, սրանք գալիս էին կաթողիկոսի մոտ և պահանջում էին դրամը: Գալիս էին ու գնում, բայց առնելու հնար չկար: Նրանք ասում էին, որ դու ջանա այդտեղից ելնել, իսկ մենք շահից դատ կպահանջենք խանի վերաբերյալ և շահով մեր դրամը կառնենք դրանից: Իսկ կաթողիկոսը թեպետ կալանատանն էր, բայց ամեն օր ելնում ու գնում էր, ուր կամենում էր:

Այնպես եղավ, որ հունաց աշխարհից մի քարավան էր գալիս Արարատ: Կաթողիկոսը իր հսկիչ Աբասին ասաց՝ եկ ընդառաջ գնանք կարավանին: Աբասն ասաց՝ ես գործ ունեմ, չեմ կարող գալ,